Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 98

ք. Երևան **07.11.2019թ.**

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջների՝ հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2001թ. օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» անդամների՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի 03/14.2/15054-19, ՀՀ շրջակա միջավայրի 3/02.2/30013-19, ՀՀ էկոնոմիկայի 05/16.3/7224-19 նախարարությունների, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Էներգետիկայի վարչության 22.1ՀԲ/[109871]-19 և Ճանապարհային ոլորտի քաղաքականության վարչության 10/18961-19, Քաղաքաշինության կոմիտեի 03/11.3/4347-2019 և Կադաստրի կոմիտեի ԼՄ//5861-2019 գրություններով ներկայացրած դրական կարծիքները՝ Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ **ՀՀ Սյունիքի մարզի Տեղ համայնքի (Խոզնավար բնակավայր)** հողերի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործին, որով նախատեսվում է Տեղ համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից **0.01 հեկտար** այլ հողատեսք (կադաստրային ծածկագիր՝ 09-046-0128-ից) փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության՝ կապի օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ բջջային կապի կայան:

Հանձնաժողովի նախագահ՝ _Վ. Տերտերյան

քարտուղար՝ _Ռ. Մինասյան